Աշխատանքի ծածկագիր 7425

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք.Երևան 17.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 3-ի նյութական իրավունքի բաժնի 8"10–րդ, 3"27-րդ, 5"13-րդ, 25"46-րդ, 34"64-րդ, 12"2-րդ հարցերը:

10-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի միավորը բարձրացվում է 1 միավորով, հաշվի առնելով սփուգման հանձնաժողովի կողմից թույլ տրված տեխնիկական վրիպումը:*

27-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում խնդրում ներկայացված փաստերի վերլուծությունից, քանզի պարտական վերաբերյալ որևէ հանգամանք առկա չէ*, ուստի գնահատականը չի բարձրացվում:

13-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում խնդրում ներկայացված փաստերի իրավական վերլուծությունից, քանի որ խնդրի պայմաններից երևում է, որ Թ-ն առնվազն ունեցել է զենքը օգտագործելու հնարավարություն*, ուստի գնահատականը չի բարձրացվում:

46-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները բխում է քրեական իրավունքի տեսության փաստական սխալի պարագայում արարքի որակման կանոններից, ուստի տրվում է 1 միավոր:*

64-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի այդ հիմնավորումները չեն բխում ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումներից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

*2-**րդ հարցի** վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի տրվում է 1 միավոր:*

9-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի հավակնորդին տրվում է 1 միավոր:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***7425*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն" նյութական իրավունքից ստացված 23 միավորը բարձրացնել 4 միավոր՝ արդյունքում արձանագրել 27 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ